# ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻՑ ԱՄՆ ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐԳԱՂԹԸ

## (XIX դ. վերջ—XX դ. 60-ական թվականներ)

ՄԱՐԻԱՄ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Ամերիկայի Միացյալ Նահանգների պատմական զարգացման բնորոշ առանձնահատկություններից մեկը միլիոնավոր մարդկանց ներգաղթն է, որը սկսվել է դեռևս XVI դ.։ Ամերիկյան ազգի առաջացումը, ինչպես նաև նրա կազմավորումը կապված են երկրի գաղութացման և, որպես դրա հետևանք, Եվրոպայից, Ասիայից միլիոնավոր մարդկանց դեպի ԱՄՆ կատարած ներգաղթի հետ։*

*XIX և XX դդ. սահմանագծում ԱՄՆ-ը ոտք դրեց մոնոպոլիստական կապիտալիզմի փուլը։ Այդ նույն պատմական ժամանակաշրջանում իմպերիալիզմի փուլը թևակոխեցին մի շարք եվրոպական երկրներ՝ Գերմանիան, Անգլիան, Ֆրանսիան, սկանդինավյան երկրները։ Ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, կային բարձր զարգացած կապիտալիզմի երեք մարզեր՝ «միջին եվրոպականը, բրիտանականն ու ամերիկյանը»[1]։*

*Մոնոպոլիստական կապիտալիզմի առաջին փուլում զարգացման տեմպերով եվրոպական երկրներից առաջնային գիրք գրավեցին Գերմանիան և Անգլիան։ Վ. Ի. Լենինը իմպերիալիզմի առանձնահատկությունների թվին էր դասում իմպերիալիստական երկրներից արտագաղթի նվազումը և հետամնաց երկրներից դեպի այդ երկրներ կատարվող ներգաղթի մեծացումը[2]։ Այդ երկրներում արդյունաբերական արտադրանքի աճի տեմպերը կլանում էին գոյացող հավելյալ բնակչությունը, և այժմ դրանց էկոնոմիկան ինքն էր բանվորական ուժի կարիք զգում։ Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ 1880—1890 թթ. ԱՄՆ կատարվող ներգաղթի հոսանքում տեղի ունեցան արմատական փոփոխություններ։ Եթե ԱՄՆ-ի նախորդ պատմության ընթացքում և, մասնավորապես, ամբողջ XIX դ. այդ երկիրն էին գաղթում հիմնականում արևմտաեվրոպական երկրների բնակիչները, ապա վերոհիշյալ տասնամյակում պատկերը փոխվում է։ 1880-ական թվականներից եվրոպական արտագաղթի հիմնական աղբյուրներ են դառնում տնտեսապես ու քաղաքականապես հետամնաց բազմազգ Ավստրո-Հունգարիան, Թուրքիան և Ռուսաստանը։ Արտագաղթ է սկսվում նաև մի շարք այնպիսի երկրներից, որոնցից մինչ այդ այն չէր կատարվում։ «Կապիտալիզմը ստեղծել է ժողովուրդների ներգաղթի մի առանձին տեսակ։ Արդյունաբերական տեսակետից արագ զարգացող երկրները, ավելի շատ մեքենաներ գործադրելով, համաշխարհային շուկայից դուրս մղելով հետամնաց երկրները՝ սահմանում են միջինից ավելի բարձր աշխատավարձ և հետամնաց երկրներից գրավում վարձու բանվորներ»[3]։ Այսպես է բացատրել դեպի ԱՄՆ կատարվող ներգաղթի նոր աղբյուրների հանդես գալը Վ. Ի. Լենինը։*

*Ինչպես երևում է № 1 աղյուսակից, 1881—1890 թթ. ԱՄՆ կատարվող ներգաղթում տեղի են ունեցել նաև քանակական ակնառու փոփոխություններ։ Եթե նախորդ երեսուն տարիների ընթացքում ԱՄՆ էր գաղթել մոտ 2,5 մլն*

---

1 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 27, էջ 450։
2 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 27, էջ 493։
3 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 24, էջ 112։

մարդ, ապա ընդամենը մի տասնամյակում՝ 1881—1890 թթ., նրանց թիվը հասավ 5.246.613-ի։ Ներգաղթողների նման քանակական աճը տեղի է ունեցել ի հաշիվ մասսայական արտագաղթի սկզբնավորման Հարավային ու Արևելյան Եվրոպայի մի շարք այնպիսի երկրներից, որոնցից մինչ այդ կատարվող արտագաղթն աննշան էր։

1891—1900 թթ. Հյուսիսային և Արևմտյան Եվրոպայի երկրներից արտագաղթը կազմեց ամբողջի 44,6%-ը, այն դեպքում, երբ Հարավային և Արևելյան Եվրոպայից արտագաղթը կտրուկ աճեց, հասնելով 51,9, իսկ 1901—1910 թթ.՝ 70,8%-ի։ 1880-ական թվականներից արտագաղթը սկսում է նվազել նաև Կանադայից և հարավամերիկյան մայրցամաքից, 1891—1900 թթ. կազմելով ամբողջի միայն 1%-ը։ Այսպիսով, եվրոպական արտագաղթի կենտրոնն արտագաղթի ավանդական երկրներից՝ Հյուսիսային և Արևմտյան Եվրոպայից, տեղափոխվում է Հարավային և Արևելյան Եվրոպայի տնտեսապես հետամնաց երկրները։

Աղյուսակ № 1

ԱՄՆ ներգաղթածների տոկոսային հարաբերությունը (1881—1920 թթ.)[4]

| Թվականը | Ամբողջ ներգաղթը (մարդ) | Հյուսիսային և Արևմտյան Եվրոպայից (%-ով) | Հարավային և Արևելյան Եվրոպայից (%-ով) | Ամերիկյան մայրցամաքային երկրներից (%-ով) | Մնացած երկրներից (%-ով) |
|---|---|---|---|---|---|
| 1881—1890 | 5.246.613 | 72,0 | 18,3 | 8,1 | 1,6 |
| 1891—1900 | 3.687.564 | 44,6 | 51,9 | 1,0 | 2,5 |
| 1901—1910 | 8.795.386 | 21,7 | 70,8 | 4,1 | 3,4 |
| 1911—1920 | 5.735.811 | 17,4 | 58,9 | 19,9 | 3,8 |

Աղյուսակ № 2

1871—1920 թթ. Հարավային և Արևելյան Եվրոպայից ԱՄՆ արտագաղթածների թիվը (ըստ տասնամյակների)[5]

| Երկրներ | Մարդ | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ավստրո-Հունգարիա | 72.969 | 353.722 | 592.707 | 2.145.266 | 896.342 |
| Բուլգարիա | — | — | — | 39.280 | 22.533 |
| Իտալիա | 55.762 | 307.310 | 615.893 | 2.045.887 | 1.109.524 |
| Լեհաստան | 12.970 | 51.806 | 96.720 | — | 4.813 |
| Հունաստան | — | 2.058 | 15.979 | 167.519 | 184.201 |
| Ռուսաստան | 52.254 | 265.089 | 602.011 | 1.594.306 | 921.957 |
| Ռումինիա | — | 5.938 | 12.750 | 58.008 | 13.732 |
| Պորտուգալիա | 4.627 | 11.917 | 27.323 | 69.149 | 89.732 |
| Թուրքիա | — | 3.505 | 30.585 | 196.649 | 77.210 |

Արտագաղթողների հիմնական մասը Հարավային և Արևելյան Եվրոպայի երկրներից ԱՄՆ եկավ 1880—1920 թթ.։ Դժվար է որոշել ԱՄՆ գաղթածների կազմն ըստ ազգության, քանի որ նրանց գրանցման ժամանակ սկզբում (1861—1895) ֆինանսների մինիստրության վիճակագրական վարչության

[4] „The Annals of the American Academy of Political and Social Science", September, 1966, p, 6.

[5] „Statistical Abstract of the United States, 1913", Washington, 1914, p. 356-

բյուրոն, իսկ հետագայում ներգաղթի և հպատակադրման բյուրոն հաշվի էին առնում ներգաղթողի ոչ թե ազգությունը, այլ՝ արտագաղթի երկիրը։ Սակայն առանձին հեղինակների բերած տվյալների հիման վրա կարելի է որոշակի պատկերացում կազմել ներգաղթողների ազգության վերաբերյալ։ Ինչպես երևում է № 1 և 2 աղյուսակներից, 1880-ական թվականներից սկսած ներգաղթողների գերակշռող մասը կազմել են բազմազգ պետություններից՝ Ռուսաստանից, Ավստրո-Հունգարիայից և Թուրքիայից արտագաղթածները։ Դրանք այն երկրներն էին, որտեղ արդյունաբերության թույլ զարգացումը և գյուղատնտեսության մեջ ֆեոդալիզմի մնացուկներն անխուսափելիորեն իրենց տնտեսական կառուցվածքից դուրս էին մղում միլիոնավոր մարդկանց։ Բացի այդ, իմպերիալիզմի հակասությունների բնորոշ դրսևորումներից մեկը՝ բազմազգ պետություններում փոքր ազգերի ճնշման ուժեղացումը, առաջ էր բերում ազգային հակասությունների սրում, որը նույնպես խթանում էր արտագաղթն այդ երկրներից։

ԱՄՆ արտագաղթելուն խթանող հանգամանքներից էր նաև տրանսպորտի ու առևտրի զարգացումը։ Եթե մինչև XIX դ. 50-ական թվականներն օվկիանոսի վրայով դեպի ԱՄՆ բեռների փոխադրումներն ու արտագաղթողների տեղափոխումները կատարվում էին փայտյա առագաստանավերով, ապա 1870-ական թվականների վերջերին շոգենավերը վերջնականապես դուրս մղեցին առագաստանավերը, արագացնելով մարդկանց տեղափոխումներն ու բեռների փոխադրությունը։ XIX դ. վերջին քառորդում ԱՄՆ-ը միջազգային առևտրի ասպարեզում գրավեց առաջատար տեղերից մեկը, ընդ որում, գերակշռում էր առևտուրը եվրոպական երկրների հետ (1860 թ. ԱՄՆ-ի ամբողջ արտահանության 86,1%-ը կազմել է առևտուրը եվրոպական երկրների հետ)[5]։ Տեղափոխումների գերակշռող մասը կատարվում էր եվրոպական նավերով։ Ներգաղթողներին շահույթով տեղափոխելու հարցում շահագրգռված շոգենավային գործակալությունների գործակալներն ու միջնորդները նրանց վարձում էին աշխարհի տարբեր անկյուններում։ Այսպես, բազմաթիվ գաղտնի գործակալներ կային Ռուսաստանում և Ավստրո-Հունգարիայում։ Այսպիսով, եվրոպական երկրների «հավելյալ բնակչությունն», օգտագործելով նորագույն տրանսպորտի բոլոր նվաճումները, տարված ԱՄՆ-ի կյանքի համեմատաբար բարձր մակարդակով, գաղթում էր Միացյալ Նահանգներ՝ այնտեղ ստեղծելով բանուժի պահեստային բանակ։

Չնայած ԱՄՆ-ի բուն բնակչության որոշակի դժգոհությանը՝ կապված մեծ թվով օտարերկրացիների ներհոսքի հետ, մինչև 1907 թ. կառավարությունը ելնելով երկրի տնտեսական պահանջներից, բացառությամբ Չինաստանից ներգաղթը դադարեցնող 1882 թ. օրենքի, չսահմանափակեց ներգաղթը։

Այսպես կոչված «նոր ներգաղթը» (1880-ական թվականներից Հարավային և Արևելյան Եվրոպայից դեպի ԱՄՆ կատարվող մասսայական ներգաղթը) ազգային կառուցվածքով խիստ տարբերվում էր նախորդներից։ Այդ հոսանքն ազգային խմբերի հսկայական բազմություն էր ընդգրկում։ Մի տասնամյակի ընթացքում՝ 1901—1910 թթ., Ավստրո-Հունգարիայից ԱՄՆ է արտագաղթել 2.143.266 մարդ։ Նրանց ազգային կազմը շատ բազմաբան է եղել. օրինակ՝ 1891—1910 թթ. արտագաղթողների 18,5%-ը եղել է լեհ, 16,1%-ը՝ սլովակ, 14,4%-ը՝ հունգար, 3,3%-ը՝ ռումին, 11,4%-ը՝ գերմանացի, 11,4%-ը՝ խորվաթ և սլովեն, 7,8%-ը՝ հրեա, 6,2%-ը՝ ուկրաինացի և այլն[7]։

Ռուսաստանից առավել մեծ չափով արտագաղթ է տեղի ունեցել 1901—1915 թթ.՝ 2.471.319 մարդ[8]։ Այդ արտագաղթի պատճառներն ընդհանուր գծե-

[5] „Statistical Abstract of the United States, 1909", Washington, 1910, p. 724.

[7] «Национальные процессы в США», М., 1972, с. 86.

[8] Նույն տեղում։

րով համընկնում են Ավստրո-Հունգարիայից տեղի ունեցածի ընդհանուր պատճառների հետ։ Այդ երկրներն իրենց տնտեսական զարգացման տեմպերով չափազանց ետ էին մնացել եվրոպական մյուս առաջատար կապիտալիստական երկրներից և ԱՄՆ-ից։ Ֆեոդալիզմի մնացուկները խոչընդոտում էին կապիտալիստական հարաբերությունների ազատ զարգացմանը։ Բացի այդ, ինչպես ռուսական կայսրության, այնպես էլ հաբսբուրգյան միապետության բազմաթիվ ազգային փոքրամասնությունները ենթարկվում էին կրկնակի՝ դասակարգային ու ազգային ճնշման։

Արտագաղթը Թուրքիայից սկսվում է XIX դ. 80-ական թվականներին, երբ կայսրությունը վեր էր ածվում Անգլիայի, Ֆրանսիայի ու Գերմանիայի կիսագաղութի, իսկ երկրի կառավարողներն էլ ավելի էին ուժեղացնում ենթակա ժողովուրդների ազգային ճնշումը։ Թուրքիայից դեպի ԱՄՆ կատարվող արտագաղթն առավելագույն չափեր ընդունեց 1900—1911 թթ.՝ 196.649 մարդ։ 1899—1910 թթ. Թուրքիայից արտագաղթածների 18,2%-ը կազմել են սիրիացիները, 23,3%-ը՝ հույները, 18,6%-ը՝ բուլղարները, սերբերը և չերնոգորցիները՝ 10,8%-ը, հայերը՝ 14,3%-ը, թուրքերը՝ 6,8%-ը և այլն[9]։ Ինչպես տեսնում ենք, 1899—1910 թթ. Թուրքիայից արտագաղթածների հսկայական մեծամասնությունը կազմել են փոքր ազգերի ներկայացուցիչները, որ վկայում է երկրում ազգային ճնշման ուժեղացման մասին։

Դեպի ԱՄՆ հայերի մասսայական արտագաղթը սկսվեց 1894 թ.։ Մինչ այդ ԱՄՆ-ում բնակվում էր ընդամենը 3000 հայ[10]։ 1894 թ. Սասունի կոտորածը, 1895—1896 թթ. հայկական ջարդերը և 1909 թ. Ադանայի կոտորածը պատճառ հանդիսացան Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանից հայերի զանգվածային արտագաղթի համար։ 1899—1917 թթ. ԱՄՆ արտագաղթեց մոտ 56 հազար հայ՝ մեծ մասամբ Արևմտյան Հայաստանից[11]։ Դժվար է ստույգ ճշտել, թե 1915 թ. եղեռնից հետո որքան հայ գաղթեց ԱՄՆ, քանի որ, ինչպես նշվեց վերը, ԱՄՆ-ի էմիգրացիոն իշխանությունները գաղթականներին հաշվառում էին ոչ թե ըստ ազգության, այլ՝ ըստ արտագաղթի երկրների, իսկ հայ տարագիրները ԱՄՆ էին հասնում՝ անցնելով աշխարհի տարբեր երկրներ։ Սակայն եթե հաշվի առնենք այն փաստը, որ 1917 թ. ԱՄՆ գաղթեց հայերի ամենախոշոր զանգվածը՝ 1.224 մարդ, ապա կարելի է եզրակացնել, որ դրանք մեծ մասամբ եղեռնից փրկվածներ էին։ Հետագա չորս տարիների ընթացքում՝ 1918—1922 թթ., ԱՄՆ գաղթած հայերի թիվը կազմեց 1.458 հոգի[12]։

«Նոր ներգաղթի» տարիներին կտրուկ մեծացավ Իտալիայից, Հունաստանից և Ռումինիայից ԱՄՆ արտագաղթողների թիվը։ Մասսայական արտագաղթն Իտալիայից սկսվեց XIX դ. 80-ական թվականներից և մեծ չափեր ընդունեց XX դ. սկզբում։ 1820—1930 թթ. ԱՄՆ արտագաղթեց 4.736,325 իտալացի[13]։ XX դ. արտագաղթն Իտալիայից տեղի է ունենում հիմնականում երկրի տնտեսապես հետամնաց գյուղատնտեսական շրջաններից, մասնավորապես, հարավից։

Հունաստանից ևս արտագաղթն իր կազմով համեմատաբար միատարր էր։ 1880—1920 թթ. ԱՄՆ արտագաղթեց 369.752 հույն[14]։ Այդ նույն ժամա-

---

9 Նույն տեղում, էջ 60։

10 A. S. Jeretzian, A History of Armenian Immigration to America, New York, 1921, p. 19.

11 Նույն տեղում։

12 Նույն տեղում, էջ 12։

13 „Historical Statistics of the United States (1789—1945)", Washington, 1946, p. 33.

14 „The Annals of the American Academy of Political and Social Science" September, 1966, p. 9.

նակահատվածում Ռումինիայից ԱՄՆ տեղափոխվեց 35.007 մարդ. ընդ որում, նրանց մեծամասնությունը կազմում էին հրեաները։ 1899—1910 թթ. ևս Ռումինիայից ներգաղթածների մեծ մասը (90%-ը) եղել են հրեաներ[15]։

Ներգաղթի հոսանքի ազգային կազմի վերոհիշյալ փոփոխությունների հետևանքով ԱՄՆ-ի բնակչության մեջ փոխվեց օտարերկրյա ծագումով մարդկանց թվի տեսակարար կշիռը։ Եթե 1890 թ. ԱՄՆ-ի բնակչության մեջ օտարերկրյա ծագում ունեցողների 31,4%-ը կազմել են Գերմանիայում, 18,7%-ը՝ Իռլանդիայում, 8,4%-ը՝ Անգլիայում, 9,5%-ը՝ Կանադայում, 2,8%-ը՝ Իտալիայում, 3,7%-ը՝ Ռուսաստանում, 8,4%-ը՝ սկանդինավյան երկրներում, 3,5%-ը՝ Ավստրիայում ծնվածները, ապա քսան տարի անց պատկերը փոխվում է։ ԱՄՆ-ի բնակչության ավագ սերնդում օտարերկրյա ծագում ունեցողների 19,9%-ը կազմում են Գերմանիայից, 11,4%-ը՝ Իռլանդիայից, 10,6%-ը՝ Ռուսաստանից, 9,2%-ը՝ Իտալիայից, 7,2%-ը՝ Կանադայից և Նյուֆաունդլենդ կղզուց, 6,3%-ը՝ Անգլիայից, 8,1%-ը՝ սկանդինավյան երկրներից, 3,1%-ը՝ Հունգարիայից, 8,6%-ը՝ Ավստրիայից գաղթածները[16]։

ԱՄՆ-ում ներգաղթածների տեղաբաշխումն ամենաուղղակի կերպով կապված էր այն բանի հետ, թե որ շրջաններում են կենտրոնացված եղել արդյունաբերական ձեռնարկությունները, որոնք զգում էին գաղթականների էժան բանվորական ուժի կարիքը։ Իրավացի է Հ. Շլեպակովը, գտնելով, որ գաղթականների բնակեցման խնդիրը ըստ էության զբաղվածության խնդիր էր[17]։ Չի բացառվում նաև այն փաստը, որ նոր եկածներն ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ հոգեբանական պատճառներով ձգտել են բնակվել այն շրջաններում, որտեղ ապրում էին նրանց հայրենակիցները։ Ինչպիսին էլ եղած լիներ գաղթականների սոցիալական անցյալը, նրանք՝ հարմարվելով Միացյալ Նահանգների տնտեսության պահանջներին, իրենց մեծամասնությամբ մնում էին ամերիկյան հասարակության ամենաստորին սոցիալական խավի մեջ։ 1901—1910 թթ. գաղթածների 57,9%-ը դարձավ սեզոնային բանվոր։ Այդ տարիներին արդյունաբերության հիմնական ճյուղերում զբաղված գաղթական բանվորների բաժինը կազմում էր ընդհանուրի 60%-ից ավելին[18]։

ԱՄՆ-ի հայ գաղթականության մեջ որակյալ և գրագետ բանվորների տոկոսն ավելի բարձր էր, քան Արևելյան Եվրոպայից գաղթած մյուս ազգությունների՝ նինը։ Այսպես, մինչև 1910 թ. ԱՄՆ գաղթած հայերի ընդամենը 23%-ն էր անգրագետ, հույների՝ 26, ռումինացիների՝ 35, բուլղարացիների՝ 41,7, լեհերի՝ 35,4, ռուսների՝ 35,4, սերբերի՝ 53,3%-ը[19]։

ԱՄՆ-ում հայ գաղթականության սոցիալական կազմի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է պարունակում 1921 թ. Սովետական Հայաստանի կառավարությանը Գ. Սովյանի ներկայացրած զեկուցագիրը։ Ըստ այդ զեկուցագրի, «Ամերիկահայ 130000... բնակչության միայն կես տոկոսն են կազմում դրամատերերը՝ գործավաճառ առևտրականներ, գործարանատերեր, խոշոր ագարակատերեր, մնացած չորս կամ չորս և կես տոկոսը կազմում են հայ մանր առևտրականները, արհեստավորները և փոքր ագարակատերերը, իսկ մնացած 95 տոկոսը կազմում են հայ աշխատավորները։ Եթե սրանցից... երեքից հինգ տոկոսը հաշվենք ժամանակի ընթացքում սեփական տուն կամ կալվածք ստեղծող մարդիկ, ապա մյուս 90 տոկոսը մնում են պարզ պրոլետար-

---

15 Նույն տեղում։

16 «Национальные процессы в США», с. 60.

17 А. Н. Шлепаков, Иммиграция и американский рабочий класс, М., 1966, с. 45.

18 Isaak Hourvich, Immigration and Labor, New York, 1912, p. 68.

19 A. S. Yeretzian, նշվ. աշխ., էջ 24։

ներ՝ գործարանատիրոջ կամ ագարակատիրոջ քմահաճույքից կախված բանվորներ»[20]։

ԱՄՆ-ի հյուսիսում կենտրոնացված և ուժգին զարգացող արդյունաբերությունը բանվորական ուժի կարիք էր զգում և այդ իսկ պատճառով ԱՄՆ-ի կառավարությունը ներգաղթի և հպատակագրման բյուրոյի միջոցով ձգտում էր գաղթականներին ուղարկել երկրի արդյունաբերական շրջանները։ Դրա հետևանքով գաղթականների մեծ մասը կենտրոնացավ ԱՄՆ-ի միջին-ատլանտյան և հյուսիս-ատլանտյան արդյունաբերական նահանգներում։ Մի տասնամյակում՝ 1900—1910 թթ., հյուսիս-ատլանտյան օտարերկրյա ծագումով բնակչությունը 1.026.8-ից դարձավ 1.976.2, իսկ հյուսիս-արևելյան նահանգներում այն 1910 թ. կազմում էր ամբողջ բնակչության 60%-ը[21]։ Այդ տարիներին ԱՄՆ գաղթածների ընդամենը 5,2%-ը հաստատվեց հարավային և 8,2%-ը՝ արևմտյան նահանգներում։ Մասնավոր ֆիրմաները և ձեռնարկատերերը ներգաղթածներին տնտեսության զանազան ճյուղերն էին ընդգրկում ըստ ազգային խմբերի, օգտագործելով վարձու գործակալությունները կամ, այսպես կոչված, «պադրոնե» սիստեմը։ Աշխատուժի այսպիսի հավաքագրումը մեծ շահույթներ էր բերում ձեռնարկատերերին։ Սլավոն գաղթականները զբաղված էին ածխի, մետալուրգիական արդյունաբերության, շինարարության, տեքստիլ ու մսի արդյունաբերության մեջ։ Հույները, պորտուգալացիները և ֆրանկո-կանադացիները հիմնականում ներգրավվում էին տեքստիլ արդյունաբերության մեջ։ Իտալացիների աշխատանքը լայնորեն օգտագործվում էր ածխարդյունաբերության, շինարարության, ռումինացիներինը՝ պողպատաձուլական արդյունաբերության մեջ, շինարարությունում, հունգարներինը՝ ածխի, շաքարի, պողպատաձուլական արդյունաբերության մեջ և այլն։ Հայ գաղթական բանվորները մեծ մասամբ զբաղված էին ավտոմոբիլային արդյունաբերության մեջ, երկաթաձուլարաններում, հանքերում, կոշիկի և տեքստիլ ֆաբրիկաներում։

Հաճախ առաջանում էին ավաններ, որոնք բաղկացած էին հայրենակից գաղթականներից, ստեղծվում էին քաղաքների բանվորական թաղամասեր, ուր բնակվում էին նույն ազգության և մասնագիտության տեր բանվորներ։ Հետաքրքիր է, օրինակ, թե ինչպես է ստեղծվել Ուստր քաղաքի՝ ԱՄՆ-ում հայերի առաջին խոշոր համայնքը։ Ուստրում գտնվող մետաղյա լարերի գործարանի տերերը, լինելով բողոքական միսիոներական կազմակերպության անդամներ, շահագրգռված էին ստվարացնելու քաղաքի բողոքական եկեղեցու ծուխը։ Այդ է պատճառը, որ նրանք բարենպաստ պայմաններ ստեղծեցին բողոքական դավանանքին պատկանող հայ գաղթականների համար՝ աշխատելու այս գործարանում։ Ի վերջո, Ուստրում կենտրոնացան բազմաթիվ հայ բանվորներ՝ իրենց ընտանիքներով, որոնց հետագայում ավելացան հայ գաղթականների նորանոր խմբեր։

Արդյունաբերության զարգացումն ուժեղացնում էր ուրբանիզացման ընթացքը։ Եթե 1860 թ. ԱՄՆ-ի խոշոր քաղաքներում բնակվում էր երկրի բնակչության ընդամենը 20%-ը, ապա 1900 թ.՝ 57%-ը։ Ինչ վերաբերում է գաղթականներին, ապա նրանց մեծամասնությունը բնակություն էր հաստատում ԱՄՆ-ի արդյունաբերական խոշոր քաղաքներում։ Այսպես, 1900 թ. գաղթականները կազմում էին Նյու Յորքի բնակչության 37, Չիկագոյի՝ 34, Բոստոնի՝ 35,1, Քլիվլենդի՝ 32,6, Սան-Ֆրանցիսկոյի՝ 33,8, Միլուոկի՝ 31,2, Մինեապոլիսի՝ 30,1, Փրովիդենսի 31,8, Վորչեստրի՝ 31,8%-ը[22]։

---

20 Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, 1967, էջ 355—356։

21 „Historical Statistics of the United States (Colonial Times to 1957)", Washington, 1960, p. 756.

22 Նույն տեղում։

Հայերը բնակություն էին հաստատել գլխավորապես հետևյալ նահանգներում՝ Նյու Յորք, Փենսիլվանիա, Օհայո, Միչիգան, Իլինոյս, Մինեսոտա, Վիսկոնսին, Կալիֆորնիա և այլն։ Նյու Յորքը, Բոստոնը, Չիկագոն և Ֆրեզնոն XX դ. առաջին տասնամյակում ունեին 10—12 հազարական հայ բնակիչ, Ֆիլադելֆիան, Գրովիդենսը, Ուստերը՝ 6—8, Դետրոյթը, Բրիջփորտը և Տրոյան՝ 4—5 հազար։ Նշված քաղաքներում էր կենտրոնացված ամերիկահայերի մոտ 75%-ը[23]։

Առաջին համաշխարհային պատերազմից հետո (չնայած 1914 թ. տեղի ունեցավ նշանակալից ներգաղթ՝ 1.218.480 մարդ) սկսվում է ԱՄՆ կատարվող ներգաղթի անկումը։ Հոկտեմբերյան հեղափոխությունը ոչնչացրեց այն սոցիալ-տնտեսական պայմանները, որոնք նախադրյալներ էին ստեղծում Ռուսաստանից մասսայական արտագաղթի համար։ Սակայն հեղափոխությունից և քաղաքացիական պատերազմից հետո երկրից դեպի ԱՄՆ էին գաղթում սպիտակ-գվարդիական սպաներ, բարձր աստիճանավորներ, քաղաքական վտարանդիներ։

Աղյուսակ № 3

*Ներգաղթային օրենսդրությամբ սահմանված ամենամյա քվոտաները Հարավային և Արևելյան Եվրոպայից ներգաղթողների համար*[24]

| Արտագաղթի երկիրը | 1921 թ. աղգային քվոտը թույլատրում էր ներգաղթել (մարդ) | 1924 թ. աղգային քվոտը թույլատրում էր ներգաղթել (մարդ) | 1929 թ. աղգային քվոտը թույլատրում էր ներգաղթել (մարդ) |
|---|---|---|---|
| Ավստրիա | 7.451 | 785 | 14.413 |
| Բուլղարիա | 302 | 100 | 1000 |
| Թուրքիա | 656 | 100 | 226 |
| Իտալիա | 42.057 | 3.845 | 5.802 |
| Լեհաստան | 25.827 | 5.982 | 6.524 |
| Հարավսլավիա | 6.426 | 671 | 845 |
| Հունաստան | 3.294 | 100 | 307 |
| Հունգարիա | 5.638 | 473 | 869 |
| Չեխոսլովակիա | 14.263 | 3073 | 2.874 |
| Ռումինիա | 7.419 | 603 | 295 |
| ՍՍՀՄ | 34.284 | 2.248 | 2.784 |
| Ֆինլանդիա | 3.921 | 471 | 569 |

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին սկսված կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը թուլացրեց կապիտալիզմի ամբողջ սիստեմը, խորապես դիպչելով նաև Միացյալ Նահանգներին։ Եվ չնայած արդյունաբերության զարգացման տեմպերը շարունակում էին մնալ համեմատաբար բարձր, երկրի տնտեսության զարգացման ընդհանուր տեմպերը դանդաղում էին, հանգեցնելով գործազրկության աճի։ Դա պայմանավորեց 1920-ական թվականներին ներգաղթի սահմանափակումը։ Բացի այդ, առաջին համաշխարհային պատերազմը դարձավ ամերիկյան շովինիզմի՝ «ամերիկանիզմի», բռնկման կատալիզատոր։ Հետապնդվում էին նեգրերը, հրեաները, կաթոլիկական դավանանքին պատկանողները, ինչպես նաև Արևելյան և Հարավային Եվրոպայից գաղթածները։

Այսպիսի սոցիալ-տնտեսական և քաղաքական մթնոլորտում ծնվեց նոր իմիգրացիոն օրենսդրությունը, որը սկզբունքորեն փոխեց երկրի իմիգրացիոն քաղաքականությունը։ Այդ նոր քաղաքականության հիմնաքարը 1921, 1924

---

23 Ա. Դ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 356։

24 Աղյուսակը կազմված է „Statistical Abstract of the United States, 1960", Washington 1961, ժողովածուի տվյալների հիման վրա։

և 1929 թթ. ընդունված ազգային քվոտների մասին օրենքներն էին։ Դրանցով սահմանափակվեց ներգաղթը ԱՄՆ։ Այդ օրենքներն առաջին հերթին պատնեշ դրեցին Հարավային և Արևելյան Եվրոպայից գաղթողների առաջ։ Ստորև բերված № 3 աղյուսակը պատկերացում է տալիս այն մասին, թե 1921 թ. հետո որքան փոքրաքանակ էր թույլատրելի ներգաղթը նշված երկրներից։

Աղյուսակ № 4

1921—1940 թթ. ներգաղթն ԱՄՆ Հարավային և Արևելյան Եվրոպայից[25]

| Արտագաղթի երկիրը | 1921—1930 թթ. (մարդ) | 1931—1940 թթ. (մարդ) |
|---|---|---|
| Ավստրիա | 412.202 | 117.621 |
| Բուլղարիա | 2.945 | 938 |
| Թուրքիա | 14.659 | 737 |
| Իտալիա | 455.315 | 68.028 |
| Լեհաստան | 227.734 | 17.028 |
| Հարավսլավիա | 49.064 | 5.835 |
| Հունգարիա | 32.868 | տվյալներ չկան |
| Չեխոսլովակիա | 102.194 | 14.392 |
| Ռումինիա | 67.646 | 3.871 |
| ՍՍՀՄ | 61.742 | 1.356 |
| Ֆինլանդիա | 16.691 | 2.143 |

Համաշխարհային երկու պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում Հարավային և Արևելյան Եվրոպայի երկրներից ԱՄՆ արտագաղթը եղել է փոքրաթիվ (աղյուսակ № 4) և, ինչպես ցույց տրվեց վերևում, կրել է հիմնականում քաղաքական բնույթ։

1948 թ. ուժի մեջ է մտնում մի օրենք, որը, ի լրացումն ազգային քվոտների, երկու տարվա ընթացքում թույլատրում էր ԱՄՆ ներգաղթել 400.000 հայրենափոխ անձանց։ Նրանց տրվում էին մի շարք արտոնություններ, ըստ որոնց այդ անձինք կարող էին լրացուցիչ ներգաղթային վիզաներ ստանալ։ Դրա հետևանքով մինչև 1951 թ. ԱՄՆ եկավ մոտ կես միլիոն մարդ, որոնց մեջ կային նաև շատ ֆաշիստական, հակասովետական տարրեր, ինչպես նաև ռազմական հանցագործներ։ Հայրենափոխ անձանց հիմնական մասը մինչև պատերազմն ապրում էր Հարավային ու Արևելյան Եվրոպայի երկրներում. 132 հազ. մարդ ապրում էր Լեհաստանում և Արևմտյան Ուկրաինայում, 60 հազ.՝ նախապատերազմական Գերմանիայում, 32 հազ.՝ Սովետական Միությունում և նույնքան էլ Հարավսլավիայում, 24 հազ.՝ բուրժուական Լիտվայում[26]։

1953 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտավ «Ուոլտեր-Մակկարենի» օրենքը, որն է՛լ ավելի կրճատեց ներգաղթողների թիվը։ Նոր օրենսդրությունն ասպարեզ մտցրեց նաև «չորս արտոնությունների» սիստեմը, որը լրացուցիչ դժվարություններ էր ստեղծում ներգաղթողների համար։ Հատկանշական է, որ ի լրացումն ներգաղթը սահմանափակող «Ուոլտեր-Մակկարենի» օրենքի, ԱՄՆ-ի կառավարությունը 1965 թ. մի շարք արտոնություններ սահմանեց Գերմանիայից, Ավստրիայից և Իտալիայից հայրենափոխ անձանց ներգաղթի համար։

Այսպիսով, Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունից և առաջին համաշխարհային պատերազմից հետո Հարավային և Արևելյան Եվրոպայի երկրներից ԱՄՆ տեղի ունեցող արտագաղթը խիստ կրճատվեց։ Փոխվեց նաև գաղթողների սոցիալ-քաղաքական բնութագիրը։ Վերոհիշյալ երկրներից դեպի ԱՄՆ մասսայական արտագաղթի ավարտը որոշակիորեն կայունացրեց ԱՄՆ-ի տվյալ էթնիկական խմբերի կազմավորումը։ Սակայն հա-

25 Նույն տեղում։

26 С. В. Филипов, Иммиграция и гражданство, М., 1973, с. 53.

մայնքների համալրումը մտավորականության խավին պատկանող մարդկանցով և վանաղան քաղաքական համոզմունքների տեր հայրենակիցներով, դրանցում ստեղծում էր որոշակի քաղաքական մթնոլորտ։ Հաճախ համայնքների ղեկավարներ էին դառնում քաղաքական գաղթականության ներկայացուցիչները։ Քաղաքական գաղթականների հոսքը համայնքներում ուժեղացրեց սոցիալ-քաղաքական բևեռացումը։

1965 թ. հոկտեմբերի 3-ին ուժի մեջ մտավ ԱՄՆ-ի նոր ներգաղթային օրենսդրությունը, որը վերացրեց ազգային քվոտների սիստեմը և սահմանեց այսպես կոչված «արտոնությունների» սիստեմ։ Նոր օրենսդրությունը նախատեսում էր 7 արտոնություն, որոնք ԱՄՆ արտագաղթել ցանկացողներին ներկայացնում էին մի շարք պահանջներ (ներգաղթողի օժտվածության աստիճան, մասնագիտություն, որակավորում, ԱՄՆ-ում հարազատների առկայություն և այլն)։

1965 թ. մինչ այժմ ներգաղթը սոցիալիստական երկրներից ԱՄՆ հիմնականում կրում է բնաանիքների միացման բնույթ։ Միակ սոցիալիստական երկիրը, որտեղից բանվորական ուժի արտագաղթ է տեղի ունենում, դա Հարավսլավիան է։ Շարունակվում է արտագաղթը Հունաստանից և Իտալիայից։

## ИММИГРАЦИЯ ИЗ СТРАН ЮЖНОЙ И ВОСТОЧНОЙ ЕВРОПЫ В США

### (КОНЕЦ XIX—60-е ГОДЫ XX в.)

МАРИАМ ТЕР-ГРИГОРЯН

**Резюме**

С 80-х годов прошлого столетия страны, которые до сих пор давали основную иммиграцию в США, отходят на второй план, а главными источниками европейской иммиграции делаются экономически и политически отсталые страны Восточной и Южной Европы: Российская империя, Австро-Венгрия, Турция. Вследствие неравномерного развития капитализма это были страны, где слабое развитие промышленности и феодальные пережитки в сельском хозяйстве неизбежно выталкивали миллионы людей из их экономической структуры.

Поскольку причины массовой иммиграции из стран Южной и Восточной Европы были примерно одинаковыми и носили экономический характер, то иммигрантский поток, несмотря на свое культурно-экономическое многообразие, был социально однороден и состоял в основном из сельскохозяйственных и неквалифицированных рабочих. С другой стороны, исходя из объективных условий развития американского капиталистического хозяйства, этот иммигрантский поток, независимо от своего экономического и социального прошлого, становился на одну и ту же лестницу в системе американской социальной иерархии, в основном превращаясь в неквалифицированных рабочих, занятых в капиталистическом производстве.